

ՊԵՔԱԱՅԻ ՀԱՅ
ՔՈՒԷԱՐԿՈՂԸ
ԵՒՍ ՊԻՏԻ
ՓԱՍՏԷ ԻՐ
ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ

ԱԶԳԱՅ
ՈՐԱԹԵՐԹ
AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE
1000 L.Ո. 71ԴԳ. ՏԱՐԻ, ԹԻԻ 155 (19455) ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 9 ՍԵՊՏԵՄԵՐ 1996 10 ԷՁ

Des Prix Frais pour un Été Chaud

tapitama
Le monde du tapis

60%

• Rabais jusqu'à 60%
• Paiement échelonné sur 10 mois
• Sans intérêts, sans 1^{er} versement

Tapis: Persan-Chinois-Européens-Moquettes-Papiers peints

ՀԱՐԱՒԻ ԶՈՒԷԱՐԿՈՂՆԵՐՈՒ ՀԱՍՆՍՄԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՅԱՒ 48%Ը

«ԱՄԱԼ» - «ՇԸՁՊԱԼԼԱ» ՑԱՆԿԸ ԿԸ ԳԵՐԱԶԱՆՑԷ

Հարաւային Լիբանանի զոյգ նահանգները երկ կ իր-
րեւ միացեալ ընտրաշրջան կատարեցին իրենց ընտրա-
կան պարտականութիւնը եւ անգամ մը եւս ցուցարբե-
ցին քաղաքական ու քաղաքացիական բարձր գիտակ-
ցութիւն: Արդարեւ, ընկճահամարի նախնական ար-
դիւնքները եկան ցոյց տալու, որ հարաւցիք աւելի քան
48 առ հարիւր համեմատութեամբ մասնակցած են ընտ-
րութիւններուն, ինչ որ ցարդ արձանագրուած ամէնէն
բարձր համեմատութիւնն է:

Մասնակցութեան բարձր համեմատութիւնները ար-
ձանագրուեցան յատկապէս Սուրի, Նապաթիէի եւ Սալ-
տայի մէջ: Փոխ վարչապետ եւ ներքին գործոց նախա-
րար Միշել Մըր, ուշ գիշերին մամուլ հարցազրոյցի մը
պահուն, ինչպէս նաեւ յրատու աղբիւրներու քաղած

**ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ**

Այսու կը յայտնենք մեր յարգոյ ճասարակու-
թեան, քէ Լեւոնալիքեանցի եւ Պէյրութի Եւրոքոմի
ճայ երեսփոխանները շնորհատրական այցելու-
թիւններ պիտի ընդունին Հ. Յ. Դ. Սարգսարպետ
ակումբին մէջ, քերքշարքի 10 եւ Զորքշարքի 11
Սեպտեմբեր 1996, երեկոյեան ժամը 5էն 9:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա.Ի ԳԻՐԸ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՈՒ
ՄԻԴՈՒՆՈՐՅՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ

Ս. Էշմիածին մէջ Կիրակի, Տեպտեմբերի
կատարուած Սրբալոյ Միւռոնի օրհնութեան
առիթով: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն. Ս.
Օ. Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը հետեւ-
եալ նամակը յղեց Ն. Ս. Օ. Տ. Գարեգին Ա.
Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Նարին Ս. Օծուբին
Տ. Տ. Գարեգին Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց
Ս. Էշմիածին:
Սիրեցեալ եղբայր ի Քրիստոս եւ
Հաւատացեալ ժողովուրդ հայոց,
Եղբայրական ջերմ սիրով ու հոգեկան անհուն
ուրախութեամբ կ'ողջունենք Ձեզ՝ Մեծի Տանն Կի-
լիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մարավան-
քէն, Ս. Միւռոնի օրհնութեան այս հոգեպարար
յղահուն:

Փառք եւ գոհութիւն կու տան Աստուծոյ, որ
անգամ մը եւս արժանի քրաւ մեր ժողովուրդը Ս.
Էշմիածին Լուսաւորչանիմ կամարներուն ներ-
քեւ եւ ազատ ու անկախ Հայաստանի միւռոնաբոյր
հողին վրայ մասնակից դառնալու սրբալոյս Միւ-
ռոնի օրհնութեան:

Արդարեւ, հաւատքի վերանորոգութեան, հայ-
րենիքին ու եկեղեցւոյ կապուածութեան առաւել
ամրացման ու ազգային միասնականութեան առաւել
ամրապնդման ի նշան գեղեցիկ ու գոտեպնդիչ
յլահ է սա: Հոս է մեր ամբողջ եկեղեցին, իր
Նուիրապետական բոլոր Աթոռներով: Հոս է մեր
ողջ ժողովուրդը՝ հայրենիքէն, Արցախէն ու աշ-
խարհի չորս ծագերէն եկած Սուրբ Էշմիածին՝ իր
հաւատքին մկրտարանը, իր կեանքին «սրբութիւն
սրբոց», Միւռոնօրհներէի համբով հաղորդուելու
իր պատմութեան հետ. ըլլալու ինքզինքին հետ եւ
վերանորոգ հաւատքով ու տեսիլքով քալելու դեպի
ուրախ ապագայ:

Այս տարուան ընթացքին, Մայիս ամսուն, Ան-
թիլիասի Մայրավանքին մէջ Մենք եւս Աստուծոյ
օրհնութեամբ ու դարձեալ ամբողջ հայ եկեղեցւոյ
մասնակցութեամբ կատարեցինք Սուրբ Միւռոնի
օրհնութիւն: Անթիլիասի միւռոնիի խոնուեցաւ
յատուկ պատուիրականութեամբ Ձեր կողմէ առաք-
ւած Ս. Էշմիածին դարաւոր Միւռոնը: Ու այսօր,
այս անգամ Կիլիկեան Միւռոնը Մեր ներկայացու-
ցիչ Սրբազան Հայեթու կողմէ բերուած կու գայ
խոնուելու Ս. Էշմիածին Միւռոնին՝ որպէս
խորհրդանիշ Հայց. եկեղեցւոյ անքակտելի միաս-
նականութեան: Այս Միւռոնին մէջ կայ ամբողջ
Հայաստանը, մեր ամբողջ պատմութիւնը: Այս
Միւռոնը մեր ազգին, հայրենիքին ու եկեղեցւոյ
մէկ ու անբաժանելի՝ ամբողջութեան գրաւականն
է:

1996 տարին մեր կեանքին մէջ պիտի դառնայ
Միւռոնաբոյր Տարի. այլ խօսքով՝ հոգեւոր կեանքի
վերածաղկման, քրիստոնեական հաւատքի խորաց-
ման ու հայրենաշինութեան հզօրացման տարի:
Արդ՝

Թող այս Միւռոնով օծուի ու պայծառանայ մեր

տեղեկութիւնները եկան հաստատելու, որ ընտրութեանց
այս չորրորդ հանգրուանը անցած է խաղաղ միջնորդութի
մէջ, արձանագրուած անախորժութիւնները (ցանկերու
վրայ անուններու «կորուստ», սխալ արձանագրութիւն-
ներ եւայլն) նման էին նախնիքաց Յ հանգրուաններու
ղէպքերուն, իսկ սկզբնական եւ ոչ-պաշտօնական ար-
դիւնքները կը հաստատեն «Ամալ» - «Շըղպալա» հա-
մախոհական ցանկին ձեռք բերած մեծ առաւելութիւնը:

ՊԵՔԱԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ, ԱԹՈՒՈՒՆ ՀԱՄԱՐ
Յ. Յ. Դ. ԼԻԲ. Կ. ԿՈՍԻՏԵՆ
ՈՐԴԵԳՐԵՑ ԺՈՐԺ ԳԱՍԱՐԺԻԻ
ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ

Լ ի բ ա ն ց ի
երեսփոխանական
ընտրութիւննե-
րուն վերջին
հաւցրուանին՝
Պէքաւ ցանակգլի
ընտրութեանց
նախօրեակին՝ Հ.
Յ. Դ. Լիբանանի
Կ. Կոմիտէն բազ-
մա կ ո ղ մ ա ն ի
խորհրդակցու-
թիւններ ունե-
ցաւ, քննարկելու
համար շրջանին
մէջ հայկական
աթոռին հարցը:



Յետ քննար-
կումներու, Հ. Յ.
Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն որդեգրեց ժորժ
Գասարժիի թեկնածութիւնը՝ Պէքաւ ի հայ առաքելա-
կան աթոռին համար:

Գասարժի երկէ այցելեց Հ. Յ. Դ. Այննարի Բաբգէն
Սիւնիակումբը, ուր տեսակցութիւն ունեցաւ Հ. Յ. Դ.
Լիբանանի Կ. Կոմիտէի. ինչպէս նաեւ Այննարի եւ


Զանլէի մարմիններուն ներկայացուցիչներուն հետ:

Նշենք, որ ընտրական հարցերու շուրջ խորհրդակ-
ցութեան համար, երեկ Հ. Յ. Դ. Այննարի ակումբ
այցելեցին նաեւ Շաւուրի Ժախուրի, Թոնի Թոնմէ եւ
Ժարուք Տանրուժ:

ԶԼԻՆԹԸՆ - ՆԵԼՈՒՆԻՆԻՆԻՆԻ ՏԵԼԵՎԻԶՈՒԹԻՒՆԸ
ՆԼԻՆՈՐԵԼԿԻՆ

ԼԵԻՒ. ՊԱՏՐԱՍ ԵՆՔ
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՐԱԳ ԶԱՅԼԵՐՈՒ

Նախագահ Պիլ Քլինթոն-
նի եւ Իսրայէլի վարչապետ
Պենիաթին Նեթանիահուի
միջեւ այսօր, Ուաշինկթը-
նի մէջ տեղի ունենալիք տե-
սակցութեան նախօրեա-




ՊԱՐԶԱՆՊԻ ՈՒՇԵՐԸ 2 ԲԱՂԱՐ ԿԸ ԳՐԱԽԵՆ

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԻՐԱՔԸ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷ
ՆՈՐ ՄԻԶԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

• ԲՈՂՈՔ՝ ԹՈՒՐԵԻՈՅ «ՉԷԶՈՔ ԳՕՏԻ»Ի ԾՐԱԳԻՐԻՆ ԴԷՄ

Իրաքի հարաւային շրի-
ջաններուն վրայ ամերիկ-
եան 44 հրթիռներու արձա-
կումէն ետք, Իրաք - Մի-
ացեալ Նահանգներ ձակա-
տումը սահմանափակուած
կը մնայ խօսքի սահմաննե-
րուն մէջ, հակառակ Իրա-
քի հիւսիսային շրջանէն
հաղորդած տեղեկութիւն-
ներուն:

Արդարեւ, ճալայ Թա-
լապանիի ուժերը երկէ
յայտնեցին, որ իրաքեան
ուժերու օժանդակու-
թեամբ, Պարզանիի ուժե-
րը գրաւած են Տեխալ եւ
Քոյ Սանճաք քաղաքները,
որոնք կը գտնուին Թալա-
պանիի ուժերուն վերջին
միջնաբերդին՝ Սիւլէյ-
մանիէի հիւսիս - արեւ-
մուտքը: Ամերիկեան ուժե-
րու սպայակոյտի պետ գոր-
ծալիքաշարքի սպառնալիք
ուղղեց Իրաքի, որ եթէ մի-
ջամէկ միջ-քրտական բա-



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ 15 ՕՐ ԱՌԱՋ

3 ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԿԸ ԶԱՇՈՒՆ
Ի ՆՊԱՍՏ Վ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Հայաստանի նախագա-
հական ընտրութիւններէն
15 օր առաջ, եօթը թեկնա-
ծուներէն երեքը Շարաթ
գիշեր քաշուեցան ընտրա-
պայքարէն, յայտարարե-
լով, որ գօրափոխ կը կանգ-
նին ԱԺՄի դեկավար Վազ-
գէն Մանուկեանի թեկնա-
ծութեան, կը հաղորդէ
«Ռեօթըր», Երեւանէն տըր-
ւած հեռագրալուրով մը
եւ հաւանական կը նկատէ,
որ Աշոտ Մանուչարեան
եւս քաշուի ընտրապայքա-
րէն, ի խնդիր նախագահ
Լեւոն Տէր Պետրոսեանի
ընդդիմադիրներուն շար-
քերուն միացման:

Եթէ այս ընթացքը շա-
րունակուի, նախագահա-
կան ընտրապայքար պի-
տի վերածուի Տէր Պետրոս-
եան - Մանուկեան ճակա-
տումի մը, կ'ըսէ «Ռեօ-
թըր», նկատել տալով, որ
եօթներորդ թեկնածուն՝
Համախալար կուսակցու-
թեան դեկավար Սերգէյ
Պատայեան լայն համա-
րանք չի վայելեր եւ նոյն-
քան յուրջ թեկնածու մը չի
նկատուիր:

22 Սեպտեմբերին, Հա-
յաստանէն դուրս ապրող
բազմահազար հայտակ-
ներ իրաւունք պիտի ունե-
նան քուէարկելու հայկա-
կան դեսպանատներուն
մէջ: Եթէ այս օրը մրցա-

կիցներէն մէկը չկարենայ
սեփականութիւն ապահ-
ովել, առաւելագոյն քուէնե-
րը ապահովող 2 թեկնա-
ծուներուն համար տեղի
պիտի ունենայ երկրորդ
ընտրութիւն մը:

Լ. Տէր Պետրոսեան, որ
անկախութեան հանգր-
ւանէն առաջ ալ տիրական
ղէմք էր, ընտրապայքար
կը մղէ կայունացման ճամ-
բուն վրայ իր իրազոր-
ծումներուն խաղաքար-
տով, մինչդեռ Վ. Մանուկ-
եան կ'ըսէ, որ ան չէ յաջի-
ղած բազմաթիւ կենսական
առաջադրանքներու իրա-
կանացման մէջ: Ան կ'ըստ-

տանայ, շահելու պարագա-
յին, տասնապատկել ամ-
սականները, աւելի արագ
ընթացք տալ սեփականաշր-
նորհումին եւ վերակենդա-
նացնել ծանր ճարտարա-
ուեստը: Անոր խոստում-
ները հաճելի կը թուին ժո-
ղովուրդին, որուն մեծա-
մասնութիւնը հազիւ օրա-
պահէր կընայ շահիլ:
Ելեկտրութիւն ընտրապայ-
քարի այլ խաղաքարտ մըն
է, իսկ Հայաստան մեծ հա-
մեմատութեամբ արտաքին
աղբիւրներու կը յենի ու-
ժանիլթի համար. Հայաս-
տան այս տարի ստիպուե-
ցաւ վերստին գործի լծել իր
կորիզային ելեկտրականը:

Լեւոնային Ղարաբաղի
տագնապն ու անոր իրա-
ւափճակը ընտրապայքա-
րի այլ կէտ մըն է. նախա-

գահր կ'ըսէ, որ շրջանի հա-
յութեան լայն ինքնավա-
րութեան ազերիական
երաշխիքները բաւարար
չեն, մինչդեռ Վ. Մանուկ-
եան աւելի կ'արծր ու յրս-
տակ կեցուածք ունի եւ
կ'ըսէ, թէ Ազրպէյճան
պէտք է ճանչնայ Ղարաբա-
ղի անկախութիւնը:

ԵՐԵՒԱՆԵԱՆ, մամուլ
տեղեկութեանց համա-
ձայն, Վ. Մանուկեան եւ Ա.
Մանուչարեան անցեալ
Հինգշաբթի կ'ազմակեր-
պած են ժողովրդային հա-
ւաք մը, որուն ներկայ
եղած են շուրջ 20 հազար
հոգի: Ա. Մանուչարեան
կոչ ուղղած է իշխանու-
թիւններուն, որպէսզի



ԼԻԲԱՆԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ
ԴՐԱՄԱՏՆԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ

Երեւանէն տրուած հեռագրալուր մը կը լայտնէ,
որ անցեալ Ուրբաթ, 6 Սեպտեմբերին, Հայաստանի
եւ Լիբանանի Կեդրոնական դրամատուներուն մի-
ջեւ ստորագրուած է գործակցութեան համաձայնա-
գիր մը:

Համաձայնագիրը, որ ստորագրուած է Հայաստա-
նի Դրամատու նախագահ Բ. Ասատրեանի եւ Լիբա-
նանի Կեդր. Դրամատու փոխ կառավարիչ Յարու-
թին Սամուելեանի կողմէ, կը ձեռն երկու դրամա-
տուներուն միջեւ գործակցութեան մարզերն ու սահ-
մանները: Անիկա կ'ընդգրկէ վիճակահաշուարկա-
յին յարաբերութիւնները, ազգային արժույթներու
փոխադարձ փոխանակելիութիւնը եւ դրամատու-
յին համակարգին մէջ գործակցութեան մարզերը:
Անիկա կ'առաջարկէ պարկ տալ երկու երկրներուն
միջեւ առեւտրական եւ տնտեսական գործակցու-
թեան վարձացման: Երկու դրամատուները իրա-
ւունք կ'ունենան փոխադարձաբար մասնաճիւղեր,
ներկայացուցչութիւններ եւ համատեղ դրամատու-
ներ ու բանալի:

THE CAPTAIN'S CHOICE

Սկովտիական CAPTAIN SCOTT Ուիսքի
կը գաղտնաբերուի ընտրել, որովհետեւ կը
պատրաստուի ամեն ընտիր հատկութեան
եւ Սկովտիոյ մէջ երեք տարի կը պահուի
կաղնիի փայտէ յատկապէս շինուած
տակառներու մէջ: Դուք կընաք
սկովտիական այս ուիսքին համաժող-
շատ յարմար սակերով:

Սկովտիական CAPTAIN SCOTT ՌԻՍԿԻ
Լիբանան կը ներածուի փայտեայ յատուկ
տակառներով եւ շիշերու մէջ կը լեցուի
սկովտիացի մասնագէտներու
հսկողութեան տակ, յատուկ գործարանի մը
մէջ: Դետեալաբար, ամոր որակը ընդմիշտ
ապահովուած է:

CAPTAIN SCOTT Ուիսքին պերճանք մըն է,
որ կը տարածուի ամբողջ աշխարհին վրայ:

ՊԻՏԻ ՅԱՂԱՐԱՄԱԿԵՆԸ ՆԱԷՒ ՊԵՔԱԱՅԻ ՄԷՋ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ ՆԱԽՊԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ

ԸՆԿԵՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

Նախընտրական մրցադաշտի ելքային քարտեզում, իբրեւ հասարակական կարծիքի մշակման ու ձեւաւորման ուղղութիւն կազմակերպութեան գործընթացի, սկզբնական փուլում մեծապէս կարեւոր է հասարակական կարծիքի նախնական վիճակը բնութագրող մեկնարկային տուեալները, առկայ միտումները, ընտրողների անկախութեան ու տրամադրութիւնների իմացութիւնն ու գրանց հաշուի առնելը: Այդպիսի նկարագրութիւններ են ընձեռնում տարբեր ծառայութիւնների կողմից անցկացուող ընկերաբանական հետազոտութիւններն ու հարցումները: Սոցիոլոգիական ծառայութիւնը 6րդ երեւան քաղաքում նմանատիպ ծառայութիւն մի հետազոտութիւն է անցկացրել տեղեկատուութեան նախարարութեան հասարակական կարծիքի ուսումնասիրման կէտերով: Հարցմանը մասնակցել են համաժամանակ ընտրանքի սկզբունքով (ըստ սեռատարիքային խմբերի եւ կրթամակարդակի) ընտրուած 1000 երեւանցիներ:

1.- Մասնակցութիւնը ընտրութիւններին:

Հետազոտութեան արդիւնքները վկայում են, որ առաջիկայ նախագահական ընտրութիւններին սպասուում է քաղաքացիների մասնակցութեան բաւականին բարձր աստիճան: Ընտրութիւններին մասնակցելու մտադրութիւն է յայտնել հարցման ենթակուածների 73 տոկոսը: 10,4 տոկոսն աւելի հակուած է ընտրութիւններին չմասնակցելու, իսկ 10,9 տոկոսն էլ ուղղակի նշում է, որ չի մասնակցելու նախագահական ընտրութիւններին (դժուարացել է պատասխանել 5,7 տոկոսը): Քաղաքական կրաւորականութեամբ աչքի ընկնող նշում է 21,3 տոկոսի մի մասը՝ 5,2 տոկոսը (որը կազմում է հարցման մասնակցների ընդհանուր թւի 1,2 տոկոսը) իր դիրքորոշումը պատճառաբանում է մշտապէս զբաղուած լինելով, ժամանակ չունենալով իրողութեամբ (յատկանշական է, որ դրանց 3/4-ը տարբեր տարիքի կանայք են), 5,6 տոկոսը (որը կազմում է հարցման մասնակցների ընդհ. թւի 1,3 տոկոսը)՝ հանրապետութիւնը բացակայելու փաստով: 13,9 տոկոսն էլ (ընդհանուրի 3,2 տոկոսը) ուղղակի նշում է, որ քաղաքականութիւնն իրեն չի հետաքրքրում: Այս կետը նշողների մէջ գերակշռում են 18-30 տարեկան միջնակարգ կրթութեամբ կանայք: Նախագահական ընտրութիւններին չմասնակցողների մի զգալի մասի՝ 48,3 տոկոսի մօտ (ընդհանուրի 11 տոկոսը) նկատելի է սեփական «ես» ինքնաբերական կամ անվստահութեան զգացումը: Նրանք գտնում են, որ իրենց ձայնը ոչինչ չի կարող որոշել ընտրութիւններում (այդպիսի արամագորութիւնները մի փոքր աւելի շօշափելի են 31 տարեկան և ավելի տարիքի ունեցող եւ միջնակարգ կրթութեամբ հարցունքների շրջանում): 19,1 տոկոսին էլ (ընդհանուրի 4,4 տոկոսը) մտահոգում է հեռաւոր անարդարութիւնների մասին միտքը:

Նշուած արդիւնքները թոյլ են տալիս եզրակացնել, որ նախընտրական քարտեզում, իբրեւ կազմակերպման, գնահատական լրատուութեան միջոցներով ընտրական գիտելիքի սկզբունքների պատշաճ մեկնաբանութեան պարագայում որոշակիորեն կ'աճի նաեւ ընտրութիւններին քաղաքացիների մասնակցութեան աստիճանը:

Նշուած արդիւնքները թոյլ են տալիս եզրակացնել, որ նախընտրական քարտեզում, իբրեւ կազմակերպման, գնահատական լրատուութեան միջոցներով ընտրական գիտելիքի սկզբունքների պատշաճ մեկնաբանութեան պարագայում որոշակիորեն կ'աճի նաեւ ընտրութիւններին քաղաքացիների մասնակցութեան աստիճանը:

2.- Ո՞ր յատկանիշներն են առաւել կարեւոր հանրապետութեան նախագահի համար կամ ինչպիսի՞նք պէտք է լինի նախագահը:

Վկայակցելով համաշխարհային փորձը՝ մասնագէտները վկայում են (ծնունդով իրենց, Ռ. Ուրբախի), որ նախագահական ընտրութիւններին ժամանակ հասարակական կարծիքը զգալի չափով կողմնորոշւում է ոչ միայն այն հիմնական դիրքերով ու գաղափարական հիմնադրութեամբ, որ առաջադրում են թեկնածուները, այլեւ, եւ թերեւս աւելի շատ, վերջիններիս անձնական, բարոյական, կամային յատկանիշներով ու նկարագրով: Անցկացուած հետազոտութեան շրջանակներում փորձ էր արուած պարզելու նաեւ նախագահին բնութագրող յատկանիշների այն ամբողջութիւնը, որն առաւել կարեւորւում է հասարակական կարծիքի կողմից: Հարցաթերթում նշուած մի շարք յատկանիշների ու բնութագրերից ըստ կարեւորութեան աստիճանի առանձնացուել են.

1) Մտաւոր բարձր կարողութիւնները 98,2%: 2) Պետական մասնակցութեամբ օժտւածութիւնը 96,4%: 3) Ազգային պատկանելիութիւնը (հայ լինելը) 93,7%: 4) Քաղաքական գործունեութեան տարիների փորձն ու

գիւտագիտական հմտութիւնները 88,9%: 5) Ազգի եւ ժողովրդի առջեւ ունեցած նշանակալից ծառայութիւնները 88,8%: 6) Կամային եւ բարոյական արժեքաւոր յատկանիշները 88,4%: 7) Կուսակցական եւ խմբակային շահերից վեր կանգնելու կարողութիւնը 85,6%: 8) Միջազգային ատենակերպութեամբ քաղաքական գործիչ նախաձեռնութիւնները 85,4%: 9) Ոչ միայն Հայաստանում, այլեւ Սփիւռքում հեղինակութիւն վայելելը 71,9%: Հարցման մասնակցների 63,1 տոկոսն էլ որոշակիորեն կարեւորել է ընտանեկան դրութիւնը, 52 տոկոսը ընկերային ծագումը եւայլն:



3.- Լ. Տէր Պետրոսեանի պաշտօնավարութեան հիմն տարիները հասարակական կարծիքի գնահատմամբ:

Նախագահական ընտրութիւնները իւրօրինակ հաշուետուութիւն, ստուգատես են նախագահութեան թեկնածուների համար իրենց անցած ուղու, արածի եւ չարածի գնահատման առումով: Տուեալ ուսումնասիրութեան նպատակներից մէկն էր պարզել հարցունքների վերաբերմունքը պաշտօնավարութեան հիմն տարիների ընթացքում ներկայի նախագահ Լ. Տէր Պետրոսեանի վարած քաղաքականութեան նկատմամբ: Ընդհանուր առմամբ, նրա վարած քաղաքականութեանը հաւանութիւն է տալիս հարցման մասնակցների 24 տոկոսը, մասամբ՝ 41,1 տոկոսը: Հասանելի է լինում չի տալիս կամ դժգոհութիւն է արտայայտում 25 տոկոսը, 9,9 տոկոսն էլ դժուարացել է գնահատական տալ: Հետգնտես արդիւնքները յուշում են, որ ներկայիս նախագահի քաղաքականութեան առաւել յաջող եւ հասարակական կարծիքի կողմից առաւել գնահատելի բնագաւառները արտաքին քաղաքականութեան ոլորտին (այսպէս պարզում ենք ծաւալած գործունեութեան հաւանութիւն է տալիս հարցունքների 44,5 տոկոսը, մասամբ՝ 35,6 տոկոսը) եւ արցախեան հիմնադրութիւնը լուծման ուղղութեամբ ջանքերն են (համապատասխանաբար՝ 17,3 եւ 40,2 տոկոսը): Իժգոհութիւնները համեմատաբար աւելի շօշափելի են ընկերային ոլորտում (61,8 տոկոսը) եւ տնտեսութեան բնագաւառում իրականացուող քաղաքականութիւնից (50,9 տոկոսը):

4.- Նախագահութեան թեկնածուների վարկանիշները:

Հարցման արդիւնքների համաձայն, իր քաղաքական վարկանիշով առաջին տեղում Լեւոն Տէր Պետրոսեանն է: Նրա օգտին պատասխան էր տալիս քուէարկելու հարցմանը մասնակցած քաղաքացիների 32,8 տոկոսը, որը կազմում է ընտրութիւններին մասնակցելու պարտաւստիան չունեցող յայտնողների 44,9 տոկոսը: 2րդ տեղում Վազգէն Մանուկեանն է՝ 9,8 տոկոս ձայնով: Երրորդ տեղում, որը համապատասխանաբար կազմում է ընտրութիւններին մասնակցողների թւի 13,5 տոկոսը: Ըստ հարցման տուեալների, միւս թեկնածուներն ունեն հետեւեալ վարկանիշները:

Պարոյր Հայրիկեան՝ 7,4%-10,8%, Սերգէյ Քաղալեան՝ 3,1-4,2%, Արամ Սարգսեան՝ 1,7-2,3%, Աշոտ Մանուկեան՝ 1,4-1,9%, Լեւոն Սարգսեան՝ 0,2-0,3%, ոչ մէկին՝ 20,8-11,6%: Դժուարաւում են պատասխանել (դեռ չեն որոշել)՝ 22-10%:

Հարցաթերթում նշուել էին նաեւ Եւրոյի Միությանը եւ Ռաֆայել Համբարձումեանի անունները, որոնց կապակցութեամբ գրանցւել էին հետեւեալ ցուցանիշները. Եւրոյի Միությանը՝ 0,6 տոկոս 0,8 տոկոս, Ռաֆայել Համբարձումեանը՝ 0,2 տոկոս 0,3 տոկոս: Ստացւած արդիւնքների խաչաձեւ վերլուծութիւնը հնարաւորութիւն է տալիս պատկերացում կազմելու նախագահութեան այս կամ այն թեկնածուի համակարգի վերաբերեալ: Լեւոն Տէր Պետրոսեանն, օրինակ, միւս թեկնածուների համեմատութեամբ, փոքր-ինչ

աւելի ժողովրդականութիւն է վայելում բարձրագոյն կրթութեամբ հարցունքների շրջանում (ի բացառեալ Վազգէն Մանուկեանի, որի համակարգի 57,6 տոկոսը եւս բարձրագոյն կրթութեամբ քաղաքացիներ են): Ներկայիս նախագահի օգտին են քուէարկելու ծառայողների 40,2 տոկոսը եւ մտաւորականների 43,7 տոկոսը: Նրա համակարգին, ի տարբերութիւն միւս թեկնածուների, գերակշռող կանայք են՝ 60,3 տոկոս: Այդ իմաստով կարելի է ասել, որ գեղեցիկ սեռի շրջանում ամենաժողովրդական թեկնածուն Լեւոն Տէր Պետրոսեանն է: Նրա օգտին քուէարկողների մէջ զգալիորեն տեղ են գրաւում 31-45 եւ 46-60 տարեկանները: Պարոյր Հայրիկեանի համակարգին, ընդհանրապէս, գերակշռող տղամարդիկ են՝ 61,3 տոկոս (նոյնը կարելի է ասել նաեւ Աշոտ Մանուկեանի՝ 64,3 տոկոս, Սերգէյ Քաղալեանի՝ 64,5 տոկոս, Վազգէն Մանուկեանի՝ 57,6 տոկոս, համակարգի մասին), իսկ իրենց ներկայութեամբ աչքի են ընկնում 18-30 տարեկան երիտասարդները՝ 42,7 տոկոս: Հարկ է նշել, որ նախագահութեան թեկնածուների՝ նշուած վարկանիշները, ինչպէս նաեւ ընտրութիւններին քաղաքացիների սպասուելիք մասնակցութեան աստիճանն արտացոլող ցուցանիշները ներկայացնում են լրատուապետական կարգի վիճակը: Իրանք, այսպէս կոչուած, եւակետային, մեկնարկային տուեալներ են, որոնք, անշուշտ, փոփոխւելու են առաջիկայ ընտրապայքարի եւ ծաւալուած քարտեզների ընթացքում, եւ որոնց համեմատութիւնը ընտրութիւնների արդիւնքների կամ անմիջապէս դրանց հաշիւներին անցկացուած այլ ուսումնասիրութեան տուեալների հետ հնարաւորութիւն կը տայ դատողութիւնները անել հասարակական կարծիքում եղած տեղաշարժերի, թեկնածուների օգտին կազմակերպուած քարտեզաւարի, գնահատական լրատուութեան միջոցների աշխատանքի արդիւնաւետութեան եւ այլ ցուցանիշների ու երեւոյթների մասին:

5. Սպասելիքներ, ակնկալիքներ կամ որո՞նք պէտք է լինեն Հ.Լ. Նախագահի գործունեութեան առաջնահերթ ուղղութիւններն ու խնդիրները:

Ընտրութիւնների նախօրեակին առանձնապէս կարեւոր է ընտրողների սպասելիքները, նրանց պահանջմունքների ու ակնկալիքների նշանակումը: Դրանց իմացութիւնն ու գործունեութեան ընթացքում հաշուի առնելը զգալիորեն պայմանաւորում է ծաւալած ընտրապայքարի եւ քարտեզների արդիւնաւետութիւնը: Հարցման մասնակցների 65 տոկոսը գտնում է, որ նախագահի գործունեութեան առաջնահերթ ուղղութիւններից մէկը պէտք է լինի ազգայնականութեան կենսամակարդակի բարելաւմն ու ընկերային վիճակի շտկմանն ուղղուած աշխատանքը: Ըստ նրատալիքների եւ առաջնահերթութեան աստիճանի, կարեւորուել են նաեւ.

- Տնտեսական բարեփոխումների շարունակումը:

ԶՕՐԱԿՈԶԻ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՆ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԸ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ Կ՝ՈՒՆԵՆԱՆ

Վերջերս «Զինուորի Մայրեր» կոմիտէի անդամները Հայաստանի բոլոր մարզերում մէջ հանդիպումներ ունեցած են գինուորական ծառայութեան տարիքի գաւառներ ունեցող ծնողներին հետ:

Ըստ կոմիտէի նախագահ Կրիթա Միրզոյեանի, հանդիպումներն ունեցած են ծառայողների ծնողները, որոնք քննարկել են ծառայողների կարգապահութեան, կրթական, առողջապահական, տնտեսական, սոցիալական, աշխատանքային, հակառակ իրենց վատաբանող թեկնածուներին, սոցիալապարտ գինուորական ծառայողների կր տարուել:

«Միանշանակ կարելի է ասել, որ բանակում ամենատարածուած բացասական երեւոյթն այսօր գորակալի կանոնների խախտումն է, երբ հիւանդներին պիտանի են ճանաչում եւ գորակալում ծառայութեան: Առողջ բանակ ստեղծելու փոխարէն, մենք այն հեղեղում ենք հիւանդներով: Իրենց գաւառների առողջութեամբ մտահոգուած ծնողները իրազեկութիւնը բոլորներին ստիպելին մեզ մեր քաղաքներ ուղղել մանրակրկիտ ուսումնասիրելու այդ հիմնահարցը», լրագրեց է:

Ըստ Կրիթայեանի, մէկ գունդի մէջ կատարած իրենց ստուգումներին իրաւունք են 35 գանազան հիւանդութիւններէ տառապող գինուորներ, սկսեալ ստամոքսի խոց, սրտի անկանոն եւ արիկներ ունեցողներէ մինչեւ յուսնոտներ եւ ռիւմատիզմ... խոսեց:

Յայտնելով, թէ «Զինուորների Մայրեր» կոմիտէն, ներկայիս կը պատրաստէ յիշեալ խախտումները բացառապէս զեկուցագիր մը, որ

նախկին ու խորացումը՝ 47,9%:

- Արցախեան հիմնադրութիւնը լուծմանը եւ տարածաշրջանում իրադրութեան հաստատմանն ուղղուած ջանքերը՝ 42,6%:

- Յանգամանակներին ու անօրինակութիւններին դէմ պայքարը՝ 41,6%:

- Մարդու ժանաչոք քաղաքականութիւնը կառավարման միջին եւ վերին օղակներում՝ 31,9%:


- Մշակույթի, գիտութեան եւ կրթութեան հովանաւորութիւնն ու զարգացումը՝ 29,2%:

- Աղէտի գօտու վերականգնման ընթացքի խթանումը՝ 23,9%:

- Հանրապետութեան ռազմական ներուժի զարգացումը՝ 23,3%, եւայլն:

6. Կուսակցութիւնների եւ հասարակական-քաղաքական կազմակերպութիւնների վարկանիշները:

Հարցման տուեալների համաձայն, իր քաղաքական վարկանիշով (ըստ համակարգիների թւի) առաջին տեղում Հայոց Համագային Շարժումն է, որին իր համակարգին յայտնել հարցման մասնակցների 14 տոկոսը: Ըստ վարկանիշի նուազման, վարկանշային աղիւսակի յաջորդ տեղերը զբաղեցնում են հետեւեալ կազմակերպութիւնները:



2. Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւն՝ 8,7%, 3. Ազգային ժողովրդավարական Միութիւն՝ 7,3%, 4. Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն՝ 6%, 5. Ազգային Ինքնորոշում՝ Միաւորում-Քրիստոնեականութիւն՝ 5,9%, 6. Հայաստանի Դեմոկրատական Կուսակցութիւն՝ 1,9%, 7. Գիտա-Արդիւնաբերական եւ Քաղաքացիական Միութիւն՝ 1%, 8. Հայաստանի Ռաւակաւար-Ազատական Կուսակցութիւն՝ 0,9%, 9. Ռաւակաւար-Ազատական (Լիւր.-Դեմ.) Կուսակցութիւն՝ 0,5%, 10. Շամիրամ՝ 0,4%, 11. Սոցիալ-Դեմոկրատական Հնչակեան Կուսակցութիւն՝ 0,3%:

Հարցունքների 52,5 տոկոսը կամ չի համակրում ներկայումս գործող որեւէ կուսակցութիւն (35,4 տոկոս), կամ էլ դժուարացել է իր համակարգին արտայայտել եղած կուսակցութիւններից որեւէ մէկի նկատմամբ (17,1 տոկոս):

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ՝ ԱԼԱՎԵՐՏԻ ՄԷԶ

Վերջերս Հայաստանի մէջ թափ առած է ոչ պետական համալսարաններու բացումը: Երեւանի Հիւսիսային Համալսարանը (կապիտալ քաղաքում) մէջ 15 օր առաջ բացումը կատարեց բարձրագոյն կրթութեան 5 ամպիոնները: Արդէն իսկ 84 ուսանողներ յիշեալ ամպիոններէն գերա ուսանելու դիմում կատարած են: Իսկ քննութիւններն առաջին հանգրուանը աւարտած է:

Մակայն ամենադժուարին հարցը սեփական շէնք չունենալու պարագան է: Համալսարանին մէջ կը դասաւանդեն ներառեալ պարտաւար ժամանող դասախոսներ: Ուսանողները կրթաթոշակը 200-300 տոլար է:



գրականություն եւ մշակույթ

ՀԱՅԱՇՈՒՆԶ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԸ

Հայրենի լառաշապահ քանդակագործներէն Արա Շիրազ անցնող շաբաթակիցքին Պէյրոս ժամանց, մասնակցելու համար *Ռաշադալի* Գ. միջազգային համագումարին, որ պիտի տեւէ մինչեւ Սեպտեմբեր 15:

Ան ծնած է 1941ին, Երեւան. որդին է Յովհաննէս Շիրազի եւ Սիլվա Կապուտիկեանի: 1966ին, ասարտել է ետք գեղարուեստաթատերական բարձրագոյն հիմնարկը, կը նուիրուի ստեղծագործական կեանքի: 1987էն 1993 վարած է Հայաստանի Գեղանկարչներու Միութեան նախագահի պաշտօնը: 1995ին ընտրուած է ԵՌԻՆԵՍ-ՔՕԻ Միջազգային Կերպարուեստի ընկերակցութեան անդամ:

1967էն ի վեր բազմաթիւ ցուցահանդէսներ տուած է Փարիզի, Լոս Անճելեսի, Տիքոնիթի, Վենետիկի, Շիքակոյի, Մոսկուայի, Ռիկայի եւ այլ նախկին խորհրդային երկիրներու մայրաքաղաքներու մէջ:

Ստորեւ կու տանք հայրենի ականաւոր արւեստաբան Պօղոս Հայթայեանի մէկ յօդուածը, որ ղրկուած է յատուկ «Ազգակ»ին:

Այն, որ Արա Շիրազը Հայաստանի արձանագործութեան շեշտուած առաջատարներէն է, ապացոյցն է նրա ազգային ընդգծուած խորքով եւ կրքերի ու յոյզերի հզօր յախումներով հարուստ ստեղծագործունէնութիւնը: Երեք տասնամեակ ճանապարհանցած արուեստագէտը ինքնական ճանրութեամբ իր անկողնէն անարժանազօրութեամբ կ'աշխատէ՝ իր անկողնէն անարժանազօրութեամբ կ'աշխատէ՝ իր անկողնէն անարժանազօրութեամբ:



«Մեծն Տիգրանի Մահը» (պրոնզ), գործ՝ Արա Շիրազի:

Ներքին, նրա պատմութեան անցեալին, ներկային, հոգեւոր ու մշակութային նշաններէ հարազատ դարձած իմաստներին: Նիւթի կառուցուածքի, քանդակաձեւի կենդանի ու շնչող մակերեսներէ հիմքում որքան դասական արուեստի սրբաբան սկզբունքներն են, նոյնքան եւ՝ աւելի շեշտուած հայրենի ընդգծեալ անհատի ու կոթողային նկարագրի, ներամիտքի վեհութիւնը, նրա արդիական վերամեկնարանման ընդգծուած շերտերը: Հայ արձանագործութեան մէջ Արա Շիրազը առաջիններէն էր, որ իր ձեւաւորած սկզբունքներէն ներհանգց հայրենի ընդգծեալ տիպական գծերին: Երբեմն գիտակցարար, իսկ աւելի յաճախ՝ ենթագիտակցորէն: Վկան՝ նրա ճանաչում գտած յուշակոթողները (Չարենցի, Սեւակի, Յովհ. Շիրազի, Ու. Սարգսեանի), դիմաքանդակները (Եր. Բոջար, Վր. Գալստեան, Հրաչեան, Ներսիսեան, Աշ. Յովհաննէսեան), յօրինուածքները («Լուսնայ», «Յուշ») եւ բազմաթիւ



Արա Շիրազ իր հօր՝ Յովհ. Շիրազի հետ:

կրաֆիլ շարքերը, որոնք թերեւս պակաս են յայտնի արուեստասէրներին:

Կրաֆիլայով Ա. Շիրազը գրադուել է դեռեւս 60ականներէն, սակայն վերջին տարիներին առաւել ընդգրկուել է դարձել նրա հետաքրքրութիւններէ շրջանակը այդ ընդգրկուած: 90ականներին մի շարք ցուցահանդէսներ է ունեցել Միացեալ Նահանգներում (Լոս Անճելես), եւ ահա հեղինակը իր նոր յօրինուածքներն է ներկայացրնելու Սփիւռքի մեր եղբայրներին:

Անկախ նրանից, թէ ինչ նիւթով է մարմնաւորում իր գեղարուեստական գաղափարները, արձանագործը հետամուտ է գծի եւ ծաւալի, մակերեսի եւ կշռութի կենդանի ու շարունակական աշխարհայեցողութեան միջոցառելու: Եթէ «Խաղաղութիւն» կրաֆիլայով մարդու եւ ընտելեալ նախապատկերը, նրանց իւրօրինակ ընկալումները, գերծ մնալով պահի ու անկողնային երեւակումներին՝ ձգտում է միշտ ընդհանրացումներ, խորհրդանշանի հասցնելով գեղարուեստական պատկերը: Ցատկապէս վերջին տարիներին երկրորդ ծաւալի մասնահատման եւ նիւթի գծային երեւելիւններին շնորհիւ կրաֆիլ եւ քանդակային ձեւերը փոխներթափանցում են, լրացնում միմեանց, ստեղծելով շարժման, տարածականութեան անվերջանալիութեան զգացողութիւնը («Երեւոյ», «Արա Շիրազի Պատկեր», «Լուսնայ»): Զինուորական շաշման ցփեմքը կրաֆիլայով

արուեստագէտին հնարաւորութիւն է ընձուռում գանձաւորական կառուցուածքային, հոգեբանական, իմաստային խնդիրներ լուծելու, դրսեւորելու իւրակերպ մտնեցումներ: Եթէ «Խաղաղութիւն» կրաֆիլայով շարքը ընտելութեամբ է ծաւալային «Թանձրացումներով», ապա «Պարուհի», «Ջրաւար», «Մանրանոց Կին» թերթներում տպուած զգեստի ակտիւ կշռութեալ շարժումներ յարափոփոխ երեւելիւններով է յատկանշուում:

Դասական արուեստից յայտնի Արա Շիրազը եւ իր Մոսկուայի հանրայնութեան արձանագործի մօտ բարդ հոգեբանական եւ տրամաթիք չեղտող իւր մտնեցումով, գեղեցիկի եւ տագնապի, արժանապատուութեան եւ վսեմ գաղափարների ներթափանցումներով է ընտելութեամբ կենդանութեան յարաբերականութիւնը եւ արարչական ոգին՝ ահա այս բեմային աստղծր, որը երկրային եւ երկնային շղարշով է պարուրուած:

Ինչպէս արձանագործութեան մէջ, կրաֆիլայով նոյնպէս Արա Շիրազը յիմնական անժխտելի վարպետ է: Ինչպէս կանաչի, աշխարհ էլ այդ մարդու կերպարներում ներկայութիւն արուեստագէտի տիպարները խորը հոգեբանական յիշգրտներն, զանազան կանոններն, ընդհանրականութիւնը, որը երբեմն հասնում է Մարդ կերպարի խորհրդանշանի: Ցատկապէս գծերի եւ մարդու նախապատկերի շրջագծան «մեկնութիւնները» տարարնոյթ են, մտքերի եւ գաղափարներին յայն շառաւիղով, սակայն անկախ այս կամ այն կերպարից մարդու ներաշխարհի «պատմութեան» բացառաշարժ խորթ է նրան: Խորհրդանշանական կոթողայնութիւնն ու արարչական նախականութիւնը այն հիմնական սկզբունքն է, որով առաջնորդում է արուեստագէտը մարդուն մօտենալիս («Լուսնայ» կրաֆիլայով, «Նաւում Կին», «Տոգուս»): Սա յատուկ է եւ յիմաքանդակներին եւ կրաֆիլայով թերթներին:

Վերջին հաշուով, արուեստագէտի մասշտապներն ու կատարողական վարպետութեան որոշիչը աստուածային շնորհ է: Երբեմն էլ որ աշխատում է, յաջողութեան առհաւատչեան նորին մեծութիւն տալանդն է, որով եւ անվերապահօրէն օժտուած է Արա Շիրազը: Վկան՝ Հայաստանում եւ Սփիւռքում ճանաչում գտած նրա հաջողունչ արուեստը:

ՊՕՂՈՍ ՀԱՅԹԱՅԵԱՆ

«ԹԱՏՐՈՆ ԵՒ ԳՈՅՈՒԹԻԻՆԸ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՄԻԱՅՆ ՆՈՒԻՐԵԱԼ ՆԵՐԻ ՀԱՇՈՒԻՆ»

Վերջերս Համազգայինի բեմում *պրեմիերա* էր: Սօս Սարգսեանի բեմադրութեամբ ներկայացուցեց Շէքսպիրի «*Հիր Արքան*»: Նախագահական նախկին թեկնածուն արդեօք որեւէ բան էր անարկում իր այս բեմադրութեամբ: «Ոչ, ի հարկէ: Շէքսպիրը մշտական է: Հարցերը շատ են», պատասխանում է Սօս Սարգսեանը: Յետոյ աւելացնում է. «Խնդիրը իշխանութիւնն է մարդ յարաբերութիւններն են: Եթէ իշխանութիւնը չի վերահսկում, ապա այն չարիք է, որն անընդհատ չարիք է ծնում, անկախ նրանից, թէ ով է իշխանութեան գլուխ կանգնած: Բեմադրութեան հիմնական խնդիրները մէկը, որ փորձել եմ շեշտել, նաեւ այն է, որ հանդիսատեսը տեսնի, թէ ինչ է մարդ արարածը, ո՞ր էր երբ նաեւ եւ ո՞ր էր երբ գնում»:

● Այդ առումով, ձեր կարծիքը Հայաստանի ներկայիս հասարակական-քաղաքական կեանքի վերաբերեալ: Ո՞ր ենք հասել մենք:

- Կան ի հարկէ լաւ բաներ: Առաջին հերթին՝ ազատութիւնը: Բայց վատն աւելի շատ է: Իսկ ամենավատն այն է, որ որպէս ազգ՝ կորցնում ենք մեր դէմքը: Պարկեշտութիւնն ու ազնուութիւնը հասարակութեան համար դառնում են անարժէք կատեգորիաներ: Գործում են նաեւ վիթխարի ուժեր դրսից: Դրանք եւս ամէն ինչ անում են հայ մարդուն եկեղեցուց, աւանդութիւնից, ընտանիքից կտրելու համար, ինչը շատ վտանգաւոր է փոքր ազգերի համար: Այս ամէնի պատճառները բազմազան են: Մեր իշխանաւորները մտահոգուած լինելով (համարենք, որ մտահոգուած են) մեր կեանքով՝ մտահոգում են, որ պետութիւնն օտեղծելով, մի գաղափար է, որ նախ, եւ առաջ նշանակում է մարդ ստեղծել:

Անգղիա, գուր, չարքի մարդու ստեղծած պետութիւնը ո՞ւմ է պետք: Գլխաւորն այն է, որ առաջինի մարդը ստեղծի այս պետութիւնն ու հասարակութիւնը: Մի պետութիւն, որտեղից գերիք մէկ երրորդն ուզում է հեռանալ. էլ ինչ պետութիւն: Հասկանալի է: Կառավարութիւնը փող չունի: Բայց սա մի հարց է. վերաբերմունքն՝ այլ հարց: Չեմ կարող իշխել, թէ մէկ տարուալ ընթացքում իշխանաւորներէք քան իսկ եկել թատրոն: Եթէ դու նախագահ ես կամ վարչապետ եւ գնում ես այսինքն թատրոնը, ապա հասարակութիւնը տեսնում ու հասկանում է, որ զանաւանում է մշակույթը: Իսկ դա՛նք շատ է վտանգաւոր: Այս էժան փիլմերը, շօնները, երգերը, որոնց դէմ ոչինչ չես կարող անել, եւ իշխանաւորներէք տեսնում է ինչ ուզում միջամտել:

● Ի՞նչ վերջնականապէ՞ս էք հեռացել քաղաքական կեանքից:

- Այո, ի հարկէ: Չմայած, եթէ ես արւեստագէտ եմ, ապա ինչ էլ որ անեմ, քաղաքականութիւնը չի լինելու: Ժիշկ կը լինի ասել՝ կուսակցական երբեք էլ չեմ եղել:

● «Հիր Արքան» բեմադրելու ձեր մտադրութեան մասին յայտարարեցիք երկու տարի առաջ: Պրեմիերայի ուղեցման պատճառները փնտրեալ են ինչ, թէ ստեղծագործական:

- «Հիր Արքան» բեմադրելու եւ իտալուց ցանկութիւն վաղուց ունէի: Երկու տարի առաջ փորձերը սկսեցիք: Բայց լեռնային աշխատանքները ընդհատուած էին մէկ, երկու, երեք անգամ, մշակույթի մեր նախարարը ծակոք Մովսէսը համաձայնեց այս ներկայացումը ձեւակերպել՝ որպէս պետական

պատուէր: Ի հարկէ, նախարարութեան տուած գումարը՝ 4 միլիոն դրամը (սրահայնից հաճած նաեւ 37%) բաւարար չէր: Բեմադրութեան համար ծախսուեց շուրջ 6 միլիոն դրամ: Ստիպուած եղանք լընդորել, աղաչել, գտնել նոր հովանաւորներ: Բայց կարծում եմ, որ այսօրուայ մեր անդէմ, անհաշակ մշակույթի յորձանուտում անհրաժեշտ էր թատրոնում հընչեցնել Շէքսպիրի իօսքը: Այսօր քայլեր են արւում Սունդուկեանի թատրոնի վերակառուցման ուղղութեամբ:

● Ի՞նչ որպէս նախկին Սունդուկեանցի, հաւատո՞ւմ էք, որ մայր թատրոնը կը վերականգնի իր նախկին դէմքը:

- Ի հարկէ, Սունդուկեանի թատրոնը մեծ կորուստ էր հայ մշակույթի համար: Եւ ով մեղաւոր է. նա էլ բոլոր պատասխան տալ: Ես հետաքրքիր Սունդուկեանից, որովհետեւ այնտեղ այլեւս հնարաւոր չէր աշխատել: Ինձանից առաջ էլ շատերն էին հեռացել՝ Մեք Մկրտչեանը, Թամար Յովհաննիսեանը, Էդգար Էլբակեանը, Աննա Էլբակեանը, Նիկոլայ Մատուրեանը եւ շատ ուրիշներ: Ուզում եմ վերականգնել, բոլոր վերականգնել: Վերջին հաշուով այդ հարցն ինձ քիչ է հետաքրքրում: Ես իմ թատրոնն ունեմ եւ հոյարտութեամբ կարող եմ ասել, որ այն փոքրիկ Սունդուկեանի թատրոն է: Իերասանները մեծ մասը նախկին սունդուկեանցիներ են, որոնք աշխատում են նոյն աւանդույթներով:

● Սունդուկեանից հեռանալու ցանկութիւն ունեցել էք նաեւ 50ականների վերջերին, երբ ցանկացել էք բեմադրել աշխատել հեռաւայրագրութիւնում: Ձեզ ետէ պահել Անհմեանը, պիտի, որ դուք դերասան էք: Այսօր ինչպէ՞ս էք գգում

բեմադրելիք դերում:

- Անհմեանը ճիշդ արեց, որովհետեւ Սունդուկեանը մեծ դպրոց էր: Յետոյ Անհմեանի ինքն ինձ մի քանի բեմադրութիւններ յանձնարարեց: Եղել եմ նաեւ Անհմեանի օգնականը: Հիմա, երբ 50 տարի աշխատել եմ թատրոնում, չեմ կարող ասել՝ աւելի շատ բեմադրել է եմ, թէ՞ դերասան:

● Ձեր դեկլամարած Համազգայինի թատրոնը 5 տարեկան է: Հե՞շտ է գոյատեւել շուկայական յարաբերութիւններում:

- Թատրոնն իր ծախսերը չի կարող ծածկել: Մի կերպ եղաւ երբ գնում: Ստանում ենք նաեւ Համազգային Մշակութային Միութեան համեստ օժանդակութիւնը: Թատրոնն իր գոյութիւնը պահպանում է նուիրեալների շնորհիւ: Բարեախտաբար նուիրեալները շատ են:

ՀԵՂԻՆԵ ՄԿՐՏՉԵԱՆ

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«Ազգակ»ի հետ հեռաձայնային կապ պահելու համար, կը խնդրուի հեռաձայնել հետեւեալ թիւերուն. — 260115, 260780 եւ 583026:



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ
Բ. ԿԱՆԱԶԵԱՆ
ԵՐԱՇԺՏԱԿԱՆ ԲՈՒԼԵՎ

ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Համազգայինի Բ. Կանաչեան Երաժշտական Բուլեւի 1996 - 1997 տարեշրջանի արձանագրութիւնները տեղի կ'ունենան Սեպտեմբեր 25-ի սկսեալ, ամէն օր կէսօրէ ետք ժամը 4-ին 7, քաղի Շաբաթ եւ Կիրակի օրերին:

- ԴԱՍԻՍԻԱՆԴՈՒՈՂ ՆԻԻԹԵՐ
1. Դաշնակ
 2. Ձուրթակ
 3. Թալաւորթակ
 4. Կիթառ
 5. Երգեհոն
 6. Չալնամարպութիւն
 7. Սրինգ
 8. Երգընթերցում (Solfege)
 9. Երաժշտութեան տեսութիւն (Theory)
 10. Ներդաշնագիտութիւն (Harmony)
 11. Երաժշտական պատմութիւն

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ (ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ - ՀԵՌ. 260504)

1996-1997 տարեշրջանի արձանագրութիւնները, ուսումնական բոլոր բաժանումներին համարձակ, Նախկին Երաժշտական Մանկապարտէսի եւ Մանկամանկապարտէսի շարունակութիւն միւսչեւ 3 Հոկտեմբեր 1996, առաւօտեան ժամը 9-ին միւսչեւ կէսօրուան ժամը 1, քաղի Շաբաթ եւ Կիրակի օրերին:

Կանոնաւորելու համար կապակերպական ընթացքը վարժարանիս, կը խնդրենք յարգող ծնողներէն, ճշգրիտ ժամանակներուն արձանագրել տալ իրենց պատկերներ:

ՎԵՐԱՄՈՒՏ

● ԲԱՐՁՐԱԳՈՅՆԻ ԵՒ ՄԻՋՆԱԿԱՐԳԻ ղաւարաններու համար՝ Երեքշաբթի, 17 Սեպտեմբեր 1996ին:

● ՆԱԽԱԿԱՐԺԱՐԱՆԻ ղաւարաններու համար՝ Երեքշաբթի, 1 Հոկտեմբեր 1996ին:

● ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ղաւարաններու համար՝ Հինգշաբթի, 3 Հոկտեմբեր 1996ին:

● ՄԱՆԿԱՄՍՈՒՐԻ համար՝ Երեքշաբթի, 7 Հոկտեմբեր 1996ին:

● Գրեմական պիտոյրները եւ գիրքերու ցանկը կը ստանալ 11, 12 եւ 13 Սեպտեմբերին, կ'ստանալ ետք ժամը 4-ին 7:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ
ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԻ



Շատերու կարծիքով՝ տգեղութիւն,
ուրիշներու համար՝ արուեստ:

Ժամանակին մորթիին վրայ կիսում Ժախեանական պատերները կամ *թաթուկներ* մոզոյվը պահում քիւն կը վաղկիկն արգիլ րնկերու բեան լուսանց քներուն մէջ։ Ըստ աստիկներու, պերնդիկնն էր ու, առաքիկներու հանրագործներու վերապահում տոլորքիւն մը, որ հետագային զերեզրը բեցաւ *ռո՛ւկ* րաժշտութեան երկրպագու սերունդին կողմէ, եւ սանչուեցաւ ինքնորժիւ որումի՝ լապալայութեան, պարսագանցումներ, աղանդներու հետեւողութեան եւ թմրեցուցիչի գործածութեան։ Սակայն վերջերս նորոգման րեսան հասանքները նոր դիրք մը շնորհած են կիսամէին, որ հեզգեհեւ, սկսած է ոչ միայն սոյոգրական երեսոյք պահուլ րնկերութեան մէջ, այլեւ՝ րնդունուիլ խորն արեսասի՛ծն մը։ Այժմ, մասնաւոր Աքրիմուսէի մէջ ոստիկաններ, գերասարդեր, Բաղաճանկներ, լրասգրողներ, ուսուցիչներ եւ բժիշկներ, այլ խօսքով՝

ԿԻՏՈՒԱԾ ՄՈՐԹԻՆ ՎԵՐԱՐԺԵԻՈՐՈՒՄԸ ԵՒ...

ՄԱՅՐԵՐՈՒ ՄՂՁԱԽԱՆՋԸ ԵՒ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԸՄՔՈՍՏՈՒԹԵԱՆ ՅՈՒՅԱՆԻՇ ԿԻՏԱԾԸ
ՆՈՐ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԸ ԳՏՆԷ, ՎԵՐԱԾՈՒԵԼՈՎ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՐԺԷՔԻ

ըկեկերուքեան սարքեր բնագաւառները, մարդիկ սկսած են երբքի սպառել կիտող վարդեաներու մաւմանկացոյցլն մ'էջ, մինչ վարդեաները ինքնիկ սկսած են աւելի լայն ընդունելութիւն գտնել առուիստի շահմանկերու եւ հանրութեան մօտ:

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՐԺԵՂՈՐՈՒՄ

Կիտուած պատերերնրու օրինակմութեան չափանիշը Ամսթերսամի մէջ բացուած կիտումներու առաջին քանգարանին Լ, որուն բացումը աղիւններու անցակ Յունիսին, 23 տարուան պրոքրուտմները, եւ փնտախիւ, եւս Է չնից ցլց ցաղորդիկն ապրիքի մշակոյթները, եւ ժամանակները, քերւած մարդկայիկն կիտում մորքիք, գարգանմոյշներ եւ գործիկներ՝ մարմնական գարգարանի արւեստիկն պատմութիւնը ցանկագրելով եւ յարգելիկն ու յաւորութիւն մարմնակն անոր հանդէպ:

Թանգարանի կառավարողին մեծ մասը ձեռք բերում է կիսամեքենա սլաքափա վարպետ Հևիկ Շիֆմայսթրի կողմից, որուն մարմնիկը ծածկում է ճեկ կիսամեքենով, եւ որ ինքն ճեկային ունի օր մի քանիսի քանգարանի գլխավոր չլիբրեյն» մէկը՝ իր մորթը բնութիւնով մահէն ետք։ Ան ծրագրւում է իր հետ գլեթգմեն տանիլ մարմնիկ վրայ կիսուն եկող եւ զատակներու տնուցները, զորս անձնակալն կրնայ տնայնապէս փոխել։

Ուկրաինացի անդին, Ֆլորիսայի և Նիլ Նորբի մէջ վերջերս կայացաւ բանդարանային ցուցա-
մանդէս մը, որ կը ներկայացնէր կիսամեծերու անց-
եալ մէկ գարտն պատմութիւնը ևս կը մշտնը ժո-
ղովրդային մշակոյթի այս բնագաւ առը բարձրացը-
նել առաջին բարձր արուեստի մտակարգակին: «Լիպ-
ւամ Սրտեր» վերնագիրով այս ցուցմանդէսը
կ'ընդգրկէր 1800ական տարիներէն մինչեւ իս-
տեանու մեծ կիսամեծերու 300 զմայլութիւններ, լու-
սանկարներ, անագծումս մեծ թուրքեր և գործի-
քեր: Ամէնէն հետին բնօրինակացած պատկերները:

նշում են սյրերի, օձեր, գառիկեր, կիսամերկ կեն-
ներ, խարխալի ճռններ, ճագնախառն ոճով ամ-
բող մաքման ծածկող վիշապներու և ծաղկեմե-
րու կլամաներ և կխառնվող զարդամանկաներ: Հա-
մեմատարաբար զգալարու և ցինքա առի վառ գու-
ներով իրար ցործուած են, բան՝ հինները, որովհե-
տեւ ներկի տեսակները հետզհետէ լաւորակ դար-
ձած են: Սակայն առկուումը եւս, սեռայնութեան,
կրօնական հաւատի, ցեղային պատկանելիութեան
և սերնդներու հաւատարմութեան բնականները
սեփական մնացած են:

ժՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Կը բռնէ թէ կ'իսառնենրու վերանորոգ ժողովրդ-
դակաւութիւնը արգիւնէ Լ ժողովրդային մշակոյ-
թի աւարածութիւն: Ինչպէս հետո՝ մարդկային մա-
մէրը փառաւորելու հոր ձգտում էր: Վերջինն ա-
րեւելեան կ'իսառնենրու փառատօններն եւ խորհրդ-
դաժողովութիւնը աեղի ունեցած են Տալասի, Փլցպրբ-
կի, Մաարբուէլի եւ Ալովախոյ նման աարքեր Դա-
ղաւներու մէջ: Իսկ արուեստի աշխարհի մէջ փա-
յող սաաղերը եեպղեեալ, աեկի մեծ քաեքիսի սպած
են յամակեկ կիտող վարպետներու՝ Էիլբաւնցնե-
րէջ: Շուն Գաւրիէի *«Մորթանա Յրիւրը»* բառերը կը
կըլ, իր քաեիկ վրայ: Ուսիկ Կոլպպրիկ իր կուրծ-
քին վրայ ունի շարժում գծանկարներու աշխարհի
տիպարներէն՝ փայտփարեկէն պատկերով կիտա-
ծը: Շաաերը կը եեաաի ին նման գերասաղերու օրի-
նակէին՝ րնոնորանկարիով սնունդ կ'իսառնենր:

Վերջերս Պիտին Մոնթլիո սևումով կիսաձկն վարդապետ մը ցլխասակուեցաւ աշխարհի մը քանիչներուն *կիկէ*-ն գիրքին մէջ՝ 896-րդ կիսածը դարձմիով իր աջ ականջին տակ զատարկ մնացած մոքքի փոքր մասին վրայ :

Մասնագետներու կարծիքով, իրկու տեսակի մարդիկ կ'իսաւ կ'ոգնն ունենալ իրենց մոտքի

վրայ. անոնի, որոնի՝ զգացական դրդապատման-
ներով՝ եւ միայն իրենց համար կիսել կու տան
դասակեր իր կամ զբուրիւն եւ գայն իր կրնի ծա-
նակ աղծ դէ, բանինամ հազուային տակ, եւ ա-
նոնի, որոնի՝ զարգացուցած են այն մտայնութիւնը,
քէ կիսածք արուեստ է, եւեհա արար զայն պահ է
ունենալ մ'արմնիկ վրայ այնպիսի աղծ դէ, որ ա-
նոնի ըլլալ յոյրքի, յնչպէս՝ քեր կամ ուր:

Լիսառն մը դրոշմերու գլինը կախեալ էր գալլն ձե-
ւագծելու հիբարիկերու յատկացում ժամանակին:
Խորձը մօրքերու վրայ էնիպիսիք առ ինչ երկար ժա-
մանակ կը պահանջէ: Ընկերանորայէւ վարպետն
կը խոստապին կիսակը ոգիկցը քմիքով կամ *առփի-
րիկ* գործածած յանախորդները, որովհետեւ այս
երկուքը կը հօսքացնեն արիւնը եւ պատճառ կը
դառնան արխանահոսքերան՝ դանդաղեցնելով մօր-
քին ապրիկելու մը: Իսկ կիսերը ինքնին բառական
ցուցնող գործընդաց մըն է, մանաւանդ՝ ոսկորին
մասն առաքանող մօրքն ինչ պարագային:

... ԶԵՐ ԲԱԶԱՏՈՒՄ

Билеж 20

ինքն ամեն
 փայտից եր
 ան Աստուծո
 րի բնակ
 արանց 9
 Բարձրորդ
 ի տ ա ծ
 ան փ եր
 ր կը կրեն
 ենց մոր
 ցն վրայ
 անկանց կե
 ր կը փա
 րքի ձեր
 անգատի
 րոնց մէ
 թ տարե



ԼԵՂՁԸՐ ՃԱՌԱԳԱՅԹՈՎ
ՔՆԾՈՒՄ

կանց բոլորած ամերիկացիներ իրենց պատասնկութեան շրջանին ըմբոստութեան իբրեւ արտախախտութիւն կիտել տուած պատկերները րանաի տգեղ կը գտնեն:

Իսկ կհասն՝ և քննադատի ը բառիս
ստի և՛ արժե (շուրջ 500 տարի):

Ինքրին գեղագիտական «սրբագրումը»
կը կատարուի լեզգոր ցանազայթով, որ կը
պայթեցնէ անջնջելի ներկին մասնիկնե-
րը՝ գանձը վերածելով չափազանց մանր
կտորներու, որոնք կը ցրուին մարմնից
մէջ։ Սեւ եւ կարմիր գոյնով կիտանները
շատ ատելի դիրքին կը ջնջուին, քան՝ դե-
ղինն ու կապտը։ Բաց գոյնով մտքը
ատելի արագ կը մարորի, քան՝ սեւը։

Հէղաթքն առաւելաւ լի կիտան մը շնչելէն տասը անգամ անելի երկար եւ տասը անգամ անելի սուղ կ'արժէ, քան՝ կիտան մը ունենալը եւ ցոբէրէ նոյնքան ցաւ կը պատահուէ՝ արարծիւիով արկուտելու կամ ձգախելէ՝ գառազանով ծեծուելու տանջանքը իշեցնելով։ Այսուհանդերձ այս սիրօցը հետք չի ձգեր եւ շատ հեռու է սորթը կտրելու, լոկելու կամ թրովելու արելու սիշնադարեան «բարբարոսութենէն»։

Կիտանձ մը ունենալու տենչով վարսկի-
ւած պատանիին կը մնալ իր ընկերներուն
օրինակին հետեւելէ առաջ երջու ազգայն
մտածել ապագայի մասին...

տաճներու տեսակներէն, սովորուածիւնը գրեթէ
